ելեալ գրով վկայիցն և գտեալ զնոսա ի Զրաբաշխն կոչեցեալ լերինն, և հարց և փորձ արարեալ զնոսա, վասն ի Քրիստոս հաւատացն, սուր ի վերայ եդեալ կոտորէ, և լեառն յայնմ հետէ յանուն Սուքիանոսի գլխաւորի սրբոյն Սուկաւ անուանի»։

Մի այլ հատուածի մէջ կերևի որ Ոսկեանք Սուքիասանց քարոզած են, վերջիններս հետևած են իւրեանց վարդապետաց և ծաղկանց լեռներու մէջ մկրտուած ի նոցանէ։

«Եւ ի դառնալ Ոսկեանց . . . չոքան ընդ նոսա և հաւատացեալ Ալանքն ոգիք եօթն և տասն և մկրտեցան . . . Եւ գլխաւոր նոցա՝ որ կոչիւր Բահանդրաս անուանեցաւ Սուքիաս . . .»։

Հետևեալ հատուածէն ևս կերևի որ Ոսկեանց նահատակուելէն յետոյ Սուքիասանք խոյս տուած են անարգ և անծանօթ վայր մի բնակիլ, ընտրած են Սուկաւէտի հարաւ արևելեան կողն՝ մի խուլ անկիւն ճանապարհից դուրս [1]։ Այս հատուածի մէջ «Մի ոմն... Սկուհէր . . . ազգ արար վասն նոցա թէ ուր իցեն» խօսքերն կը համաձայնին ժողովրդեան մէջ «կուսանք մատնող Խաստուլցիք» ասուած առածին։

«Եւ ապա ցանկանալով նոցա առաւել յանարգ տեղւոջ և անծանօթ վայրս բնակել՝ գնացին ի Զրաբաշխ լեառն, որ և կոչեցաւ Սուկաւ կամ Սուկաւէտ ի Բագրևանդ գաւառի... և ի խնդրել զնոսա թագաւորին, մի ոմն ի նախարարացն Սկուհէր անուն ազգ արար վասն նոցա թէ ուր իցեն, և զինչ պաշտեն։

«Հարին զպարանոցս նոցին ի վերայ վիմի, և ընկեցին ի խորափիտ մի . . . ի տեղւոջ անդ բղխեաց աղբիւր ջուրց...»։

---

1. Բագրեւանդայ մասին որչափ որ պատմագիրներու մէջ տեսած եմ, աւելի ուղիղ գտած եմ, քան ներկայ դարու վերջին քարտէզին մէջ տեսնուած նկարագրութիւններն։